Հավելված
ՀՀ փոխվարչապետի
N 193-Ա որոշման

«ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՀԶՈՐԱՑՈՒՄ ՀԱՆՈՒՆ ՀԱՋՈՂՈՒԹՅԱՆ» ԾՐԱԳԻՐԸ

1.	Ծրագրի նպատակը	Բարելավել Հայաստանի Հանրապետության Շիրակի և Տավուշի մարզերում կյանքի դժվարին իրավիճակում հայտնված 400 երիտասարդի (17-35 տարեկան) սոցիալ-տնտեսական վիճակը՝ զբաղունակության և ձեռներեցության ներուժի, պետական և ոչ առևտրային կառույցների կարողությունների զարգացման միջոցով: Պետական և ոչ առևտրային կառույցների զարգացումը նախատեսված է իրականացնել թեմատիկ դասընթացների միջոցով: Ոչ առևտրային կառույցները դասընթացների ավարտին կկարողանան ստանալ աջակցություն՝ ենթադրամաշնորհների տեսքով: Ծրագրի ուղիղ շահառու երիտասարդների համար նախատեսված են տարբեր թեմատիկ դասընթացներ, աշխատարաններ, հանդիպումներ, որոնք իրականացվելու են Գյումրի և Իջևան քաղաք-ներում: Դասընթացների փուլը հաջողությամբ ավարտած 12 երիտասարդներ կկարողանան իրականացնել իրենց համայնքային զարգացման գաղափարը՝ ծրագրի շրջանակներում ֆինանսական և մենթորական աջակցություն ստանալու միջոցով:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից:
3.	Բարեգործը	«ՍՕՍ-Մանկական Գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամ (ՀՎՀՀ՝ 03517269, իրավաբանական հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան, Հրաչյա Քոչարի 8, բնակարան 18-19, գործունեության հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, քաղաք. Երևան, Երզնկյան փողոց, տուն 79)
4.	Ծրագրի կատարողը	Գյումրու «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» հասարակական կազմա-կերպություն (ՀՎՀՀ՝ 05536501, իրավաբանական հասցե՝ Հայաստանի Հանրապետություն,

		Շիրակի մարզ, քաղաք Գյումրի, Հովսեփյան 5/1, գործունեության հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, քաղաք Գյումրի, Ալեք Մանուկյան 26)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանի Հանրապետության Շիրակի և Տավուշի մարզեր, բնագավառը՝ սոցիալական
6.	Ծրագրի բյուջեն	25,710,607 դրամ
7.	Բարեգործություն ստացողը	Հայաստանի Հանրապետության Շիրակի և Տավուշի մարզերում բնակվող, կյանքի դժվարին իրավիճակում հայտնված շուրջ 400 երիտասարդ (17-35 տարեկան)
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2025 թվականի ապրիլի 1-ից մինչև 2027 թվականի դեկտեմբերի 31-ը
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	1) քաղաքացիական հասարակական կազմակերպությունների կարողությունների զարգացում վերապատրաստում-դասընթացների միջոցով՝ 5,331,762 դրամի չափով (ռազմավարական կառավարում, ծրագրերի որակյալ մշակում և արդյունավետ կառավարում, հաղորդակցություն, ֆոնդհայթայթում, երիտասարդների հետ տարվող աշխատանքի տեսակներ, սկզբունքներ, մեթոդաբանություն և երիտասարդական քաղաքականություն թեմաներով), նախատեսվում է իրականացնել 2025 թվականի ապրիլի 1-ից մինչև 2027 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում. 2) քաղաքացիական հասարակական կազմակերպությունների կողմից համայնքային երիտասարդական ծառայությունների տրամադրման և երիտասարդների ու համայնքի զարգացմանն ուղղված ծրագրերի իրականացման համար ենթադրամաշնորհների տրամադրում և ընթացիկ աջակցություն՝ 5,402,369 դրամի չափով, նախատեսվում է իրականացնել 2026 թվականի հունվարի 1-ից մինչև 2027 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում. 3) երիտասարդական տարածքների ստեղծում և գործարկում, ներառյալ ոչ ֆորմալ կրթական հարթակի մոդելի ստեղծում՝ 1,162,800 դրամի չափով, նախատեսվում է իրականացնել 2025 թվականի ապրիլի 1-ից մինչև 2027 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում. 4) ստեղծել երիտասարդների շահերի պաշտպանության ցանց և նպաստել երիտասարդների կարողությունների զարգացմանն ու աշխատաշուկայում մրցունակության բարձրացմանը թեմատիկ դասընթացների կազմակերպման միջոցով՝ 5,728,728 դրամի չափով: Նախատեսված դասընթացները ներառում, բայց չեն սահմանափակվում հետևյալ թեմաներով՝ մարդու, սոցիալական և

		աշխատանքային իրավունքներ, առաջնորդություն, քննադատական մտածողություն, հաղորդակցություն, հանրային խոսք և շահերի պաշտպանություն և այլն, նախատեսվում է իրականացնել 2025 թվականի ապրիլի 1-ից մինչև 2027 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում. 5) դասընթացներին հաջողությամբ մասնակցած 12 ակտիվ երիտասարդներ աջակցություն կստանան իրականացնելու համայնքի զարգացման իրենց նախաձեռնությունները՝ 6,418,656 դրամի չափով, նախատեսվում է իրականացնել 2025 թվականի ապրիլի 1-ից մինչև 2027 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում. 6) Շիրակի և Տավուշի մարզերում երիտասարդների հիմնախնդիրների, առկա հնարավորությունների, մարզային երիտասարդական նախաձեռնությունների, հաջողության պատմությունների մասին «Երիտասարդների ձայնը» խորագրով տեսանյութերի պատրաստում՝ 1,666,292 դրամի չափով, նախատեսվում է իրականացնել 2026 թվականի հունվարի 1-ից մինչև 2027 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	1) իրականացվող դասընթացների, ծրագրային հանդիպումների ընթացքում հյուրանոցային և սննդի կազմակերպման ծառայությունների ու անհրաժեշտ պարագաների (սուրճ, թեյ, միրգ, խմորեղեն, հյութեր, շշալցված ջուր) ձեռքբերում՝ 7,785,721 դրամի չափով. 2) դասընթացների, հանդիպումների համար անհրաժեշտ գրենական պարագաների ձեռքբերում՝ 455,754 դրամի չափով. 3) դասընթացավարների, հետազոտող-փորձագետների, մենթորների, ֆասիլիտատորների, տեսանկարահանման և խմբագրական ծառայությունների ձեռքբերում՝ 11,248,152 դրամի չափով. 4) 12 երիտասարդների և 4 ոչ առևտրային կազմակերպությունների նախաձեռնություններն իրականացնելու համար՝ գրենական պիտույքների, տպագրական նյութերի և սննդի ձեռքբերում՝ 4,434,144 դրամի չափով. 5) տրանսպորտային ծառայությունների ձեռքբերում՝ 1,786,836 դրամի չափով:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Նախատեսված չեն:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի, աշխատանքի և սոցիալական հարցերի, տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունների, ինչպես նաև Տավուշի մարզպետի և Շիրակի մարզպետի աշխատակազմերի, տեղական ինքնակառավարման մարմինների հետ

13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

31.03.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ